

Տեղեկանք գործող օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 401. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելը

1. Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0,04 տոկոսի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարի (այդ թվում՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային գումարների, հարկային հսկողության արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 730 օրվա համար:

3. Սույն հոդվածով սահմանված կարգով տույժեր են հաշվարկվում նաև այն դեպքերում, երբ՝

1) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով սահմանված մասնագիտական հանձնաժողովը փոփոխում կամ կասեցնում է արտոնյալ որակված սուբսիդիաների, սուբվենցիաների և դրամաշնորհային ծրագրերի որոշումները՝ դրանց շրջանակներում պակաս վճարված կամ չվճարված ԱԱՀ-ի գումարների նկատմամբ:

2) Օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 37-րդ կետով սահմանված՝ լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ունեցող հարկ վճարողի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ԱԱՀ-ի գումարների նկատմամբ՝ սկսված ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների համար ԱԱՀ-ի գումարների վճարման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետին հաջորդող օրվանից, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում չեն վերաարտահանվում Հայաստանի Հանրապետության տարածքից:

Հոդված 430. Գույքի արգելանքի կիրառության հիմքերը

1. Չկատարված հարկային պարտավորության չափը 1 միլիոն 500 հազար դրամ կամ ավելի կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի իրականացրած վարչարարության ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային մարմնի ընդունած իրավական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարը Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու:

2. Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը կարող է կիրառվել միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով: Արգելանքի ենթակա է միայն այն գույքը, որն անհրաժեշտ է հարկային պարտավորության կատարումն ապահովելու համար՝ հարկային պարտավորությունների չափով: Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը դրվում է հարկ վճարողի գույքի վրա՝

անկախ այն հանգամանքից, թե ում մոտ է այն գտնվում: Արգելանքը չի կարող կիրառվել այն գույքի նկատմամբ, որի վրա օրենքով բռնագանձում չի կարող տարածվել, կամ որի պահպանման ժամկետը արգելանք դնելու պահին պակաս է երեք ամսից: Արգելանք չի կարող դրվել բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, ներդրումային ֆոնդերի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդերի) և ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունների բանկային, դեպո կամ կենսաթոշակային հաշիվների և դրամական միջոցների վրա: